— Մեր ժամը չէ գնում, — պարզաբանեց հինգերորդը:

— Երեսին խաչ չէ հանում, — հաստատեց վեցերորդը:

Այսպէս, իւրաքանչիւրը կարդում էր դատապարտեալի յանցանքները:

— Լաւ, դուք ի՞նչ գործ ունէք, չարաճճիներ, — ծիծաղելով ընդհատեց Ասլանը:

— Անհաւա՛տ է, — կրկնեցին կրօնի փոքրիկ պաշտպանները միաձայն:

— Մի շաբաթ առաջ մեր գիւղում մի լաւ շնաթակ կերաւ, — ասաց նրանցից մէկը. — գիւղացիք այնքան ծեծեցին, որ ողջ տեղը ականջը մնաց. հիմա էլի եկել է, չէ ամաչում:

Փոքրիկ հովիւներից մէկը երկար ցուպի ծայրը մօտեցրեց նրա քթին եւ, սաստիկ շփելով, հարցրեց.

— Ինչո՞ւ ես լեզուդ պահել, դէ խօսիր, սո՞ւտ ենք ասում:

Նա ոչինչ չպատասխանեց եւ նայեց դէպի երկինքը:

Հալածականին մեր պաշտպանութեան տակ առնելով, մենք մեծ դժուարութեամբ կարողացանք համոզել նրա հալածիչներին, որ այդ «անհաւատը» միւս անգամ նրանց գիւղին չի մօտենայ եւ «սատանայական» գրքեր չի ծախի: Նրանք ցրուեցան, ասելով.

— Եթէ կը գաս, կտեսնե՛ս... եւ իւրաքանչիւրը ցոյց տուեց ձեռքի ցուպը:

Մենք հեռացանք, նրան մեզ հետ տանելով: Յետոյ երեւաց, որ այդ մարդը սուրբ գրքերի տարածող մի գրավաճառ էր:

Բոլորովին մութն էր, երբ հասանք մի այլ գիւղ: Նա ասաց մեզ, որ այնտեղ կարող ենք յարմար իջեւան գտնել, եւ ինքը առաջնորդեց մեզ դէպի մի տուն:

— Դա «եղբայր» Թաթոսի տունն է, — ասաց մեզ նախքան դռների բացոիլը:

Շեմքի վրայ երեւաց տան տէրը:

— Եղբայր Թաթոս, քեզ համար հիւրեր եմ բերել, — աւետեց նրան սուրբ գրքերի տարածողը:

— Իմ աչքերի վրայ տեղ ունեն, — պատասխանեց եղբայր Թաթոսը, մօտեցաւ եւ մեզ ձեռք տուեց:

Սրահում մեզ համար նստելու տեղ պատրաստեցին, իսկ ձիաները կապեցին սրահի առջեւ: Մենք տեղաւորուեցանք թանձր թաղիքի վրայ: Սուրբ